ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԲՄԾՁԲ-7/5-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 16.04. 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «Միտք-Կ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 06.04.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/5-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը և այն փաստը, որ «Միտք-Կ» ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված ծառայության միավորի գինը նվազեցնել 3900 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին,

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 39000000 (երեսունինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Միտք-Կ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ք.Վանաձոր, Նժդեհի 7հ
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570022962570100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 06903588
ՀՎՀՀ 02522157	
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ

«ՄԻՏՔ-Կ»
«MITQ-K»
06903588

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ կոդը	Գնման առարկան	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գնման ժամանակացույց, ըստ 2018թ. ամիսների		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 10.12.19
1	98391120/9	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	Լ-կ	3900	10000	6000	4000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Միտք-Կ» ՍՊԸ
տնօրեն

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, ոչ ուշ քան 10.12.2019
1	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	23400000	23400000	23400000	39000000	39000000	39000000	39000000	39000000	39000000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Միտք-Կ» ՍՊԸ
տնօրեն

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ